

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ PUBLICATIONS ПУБЛИКАЦИИ

ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

ՀԱԿՈՒԵՐԵՑ ԱՄԱՍԻԱՑԻ (ԷՄԱՍԻԱՑԻ). ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Բանալի բառեր՝ Գևորգ Ախվերդյան, Վիեննայի Մխիթարյան ձեռագրացուցակ, «Տաղ զղջման», «աքսորանք», ժէ. դ. վերածնունդ, «նոր գրաբար», անհատ և միջավայր, մահ և կյանք, նորահայտ տաղեր:

Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը որքան էլ տպագրվել է և ուսումնասիրվել, այնուհանդերձ, դեռևս ի հայտ են գալիս էջեր, անուններ, որոնք մասամբ կամ լիովին գիտական հանրությունը հայտնի չեն: Ժէ. ժ. դ. մեր բանաստեղծների շարքը լրացնելու է գալիս տաղասաց Հակոբ քահանա Ամասիացին կամ էմասիացին, որի գործերին ծանոթանալու և դրանք տպագրության ներկայացնելու առիթն ընձեռեց ՄՄ Հ^ր 3751-ի (Թիֆլիս, 1846-1859 թթ.) ներքո պահպանվող՝ անվանի բանահավաք Գևորգ Ախվերդյանի երգարանի (Դավթար) ուսումնասիրությունը:

1846 թ. վերջերից տեղափոխվելով Թիֆլիս՝ Գ. Ախվերդյանը ձեռնամուխ եղավ բանահավաքչական գործունեության. նրա գրական որոնումների թիրախում ոչ միայն մեզ արդեն հայտնի հայ աշուղական պոեզիան էր, այլ նաև հայ միջնադարյան հոգևոր և աշխարհիկ բանաստեղծությունը: Սրանց թվում առանձնակի ուշադրություն է գրավում Հակոբ երեց Ամասիացի տաղասաց-բանաստեղծը, որի անունով Դավթարում կա թվով 6 տաղ: Ուշադրության արժանի է ինչպես տաղերի բանաստեղծական արժեքը, այնպես էլ այն հանգամանքը, որ այլ աղբյուրներից այս տաղերի և տաղասացի մասին որևէ բան հայտնի չէ: Այս տաղերն այլ ձեռագրերում և տպագիր աղբյուրներում գտնելու ուղղությամբ մեր որոնումներն ապարդյուն եղան (բացառությամբ Երկուսի, որոնց մասին կիսոսենք), իսկ Մատենադարանում պահվող ձեռագրերից միայն այս մեկում են,

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, բ.գ.թ., հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 10, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 10, 2022:

ինչը փաստվում է նաև Աս. Մնացականյանի կազմած՝ տաղերի անտիպ ցանկով¹։ Իսկ ի՞նչ է հայտնի Ամասիացի կամ էմասիացի Հակոբ երեց տաղասացի մասին առհասարակ։

Որպես տաղասացի՝ այսպիսի անվան հիշատակման հանդիպում ենք Հ. Աճառյանի Անձնանունների բառարանում. «Յակոբ քահանա Ամասիացի, տաղասաց (ԺԸ դա՛ր)»²։ Հ. Աճառյանի հիմքը եղել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրացուցակի տվյալը, որ արտացոլված է նույն ցուցակի ցանկում³։ Հայերեն ձեռագրացուցակներում կան այս անվամբ և նրան զուգորդված մի քանի անուններ, որոնց, բացառման և քննական սկզբունքով, հարկ է զատել միմյանցից և հասկանալ, թե նրանցից ո՞ր Հակոբ Ամասիացին կամ Հակոբ երեցը կարող է առնչվել ունենալ ԺԷ. դարակեսում և ԺԸ. դարասկզբում ծնված և գործունեություն ծավալած՝ ՄՄ Հժբ 3751 ձեռագրում հիշատակված Հակոբ երեցի հետ։ Վիեննայի ձեռագրացուցակի 1-ին հատորի կազմող Հ. վրդ. Տաշյանը ևս այս անունով տաղասացի մասին շատ տվյալներ չի ունեցել, ուստի ճշգրտման և ուղղորդման նպատակներով «Ամասիացի» բաժնում համեմատություն մեջ է դրել Ամասիացի մհտ. Գևորգյան դպրի անվան հետ։ Վերջինս հայտնի Հակոբ դպիր Գևորգյան Ամասիացին է, հեղինակը «Կանոնագիրը հայոց»-ի խմբագրության, որ հայտնի է «Համառոտություն կանոնաց» անունով։ Այս երկի բազում ընդօրինակություններ կան, իսկ ինքնագիրը ՄՄ Հժբ 3100-ն է՝ գրված 1800 թ.⁴։ Եվ բնականորեն, այս երկի մյուս ընդօրինակություններն արդեն ԺԹ.

¹ Աս. Մնացականյան, IX-XIX դարերի հայ բանաստեղծների ստեղծագործությունների համառոտ բերլիոգրաֆիա (կազմված ըստ Հայկ. ՍՄԻ Մատենադարանի հայերեն գրչագրերի), Երևան, 1941, Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, Հժբ 78/բ, էջ 647, «Յակոբ երեց»։

² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, 1946, էջ 516, հոդվ. Հժբ 287։

³ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Գ. Յակովբոսով. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1895, էջ 1121, սիւմ Բ., «Ամասիացի» հոդվածը։

⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ., խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2019, էջ 509-511։ Ի դեպ, Հակոբ դպրի ինֆնագիր համարվող միայն այս ձեռագիրը չէ. որպես ինֆնագիր են հիշատակված նաև եղմ 2056 (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 7., կազմեց՝ Ն. արքեպ. Պողարեան, Երուսաղեմ, Սրբոց Յակոբեանց տպ., 1974, էջ 102-103)։ Արմաշ 48, 1800 թ. (Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, կազմ.՝ Թ. Թովհեանի, Վենետիկ, Սուրբ Դավաթ, 1962, էջ 162-163)։ Մեր խնդիրն, իհարկե, վավերական ինֆնագրի կնիքը լուծելը չէ, այլ այն, որ բոլոր տեղերում հեղինակային գրչության ժամանակը 1800 թվականն է, որը արտացոլված է հեղինակի հիշատակարանում. «Յաւէտ յուսալի / անձին առանձին / կրթիլ ի կանոնս, / օգուտ օգտաբեր / բերել բերկրալի։ / Որ եմ ամենապատրաստ ընկալուչ եպերանաց գիտնոց եւ առաքինեաց, / բայց խթան աւացից խորհացելոց ի խորշս խցից եւ եկեղեցեաց / Յակոբ դպիր Ամասիացի մահուեսի Գեորգեան։ Ի 25 Սեպտեմբերի 1800 եւ ՌԴԽԹ, յԱմասիա», (եղմ 2056, էջ 102/բ), իսկ արդեն 1875 թ. ընդօրինակված ձեռագրում սա գործածված է որպես հեղինակային-նախագաղափար հիշատակարան. տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան,

դարի են: 1800 թ. գրված գործը մեզ հիմք է տալիս ասելու, որ այս Հակոբ Ամասիացու ծննդյան և գործունեության ժամանակը ԺԸ.-ԺԹ. դդ. են, և նրա անունն ու գործերը բնականորեն պետք է հարեն ԺԸ.-ԺԹ. դդ. գրված և ընդօրինակված ձեռագրերին: Բացի դրանից՝ «Կանոնագիրք հայոց»-ի խմբագրի Հակոբ Ամասիացին որևէ տեղ չի հիշատակվում քահանա կամ երեց կոչումով, մինչդեռ ԺԸ. դարավերջի՝ Վիեննայի ցուցակի Հակոբ Ամասիացին քահանա է, և նրա տաղը բանաստեղծական մտորումներով ու բանաստեղծման կարողություններով օժտված մարդու գործ է: Մինչդեռ նույնը չի կարելի ասել դպիր Հակոբ Ամասիացու մասին, որի նախագաղափար հիշատակարանի չափածո մասը զուտ անվարժ շարադրանք է՝ չափածո հիշատակարաններին մոտեցնելու նպատակով, ոտանավորից ոչ ավելի: Վիեննայի ցուցակում հիշված Հակոբ Ամասիացին հիշատակված է ԺԸ. դ. ձեռագրերում: Այս Հակոբ Ամասիացուց ձեռագրացուցակներում հայտնի է մեկ տաղ՝ նշված Վիեննայի՝ Հ. Տաշյանի կազմած ցուցակում, որի երկու օրինակներն են՝

ա. ձեռ. 160, Տաղարան հայերէն, տաճկերէն, ԺԸ.-ԺԹ. դար, 1796-1827, էջ 468/ա, Հմր 9, ձեռ. թղ. 130բ, «Տաղ զղջման շարադրեալ յԱմասիացի Յակոբ քահանայէ — Անձն իմ, ընդէ՛ր հեղգացեալ ես»,

բ. ձեռ. 514, Տաղարան, ՌՄԽԱ. — 1792, էջ 986/բ, ձեռ. 107բ, «Տաղ զղջման, շարադրեալ յԱմասիացի Տէր Յակոբ քահանայէ»:

Այս տաղը նույն Հակոբ Ամասիացու անունով նույն Վիեն. Հմր 160 ձեռագրից տպագրվել է «Յուշամատեան Պոնտական Ամասիոյ» գրքում⁵:

Վիեննայի ցուցակի երկրորդ հատորի կազմող հ. Հ. Ոսկյանն այս հեղինակին է վերագրում «Տաղ չոգեշահ — Անձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր» սկսվածքով գործը՝ հետևյալ փակագծային ծանոթությամբ. «(հեղգացեալ ես (ըստ Թ. 160, Հմր 9, 2. Յակոբ Ամասիացիէն))»⁶, ինչը, իհարկե, ինչպես պարզվեց, սխալ վերագրում է: Հ. Հ. Ոսկյանը, հավանաբար հիմք ունենալով միայն Հ. վրդ. Տաշյանի նկարագրության սկզբնատողի հետ որոշակի ընդհանրությունը, Հակոբ քահանա Ամասիացուն է վերագրել այս տաղը՝ նույն իմաստի համար «ծուլանալ» և «հեղգանալ» տարբերությունը նկատելով և դա դիտարկելով որպես բնագրային փոփոխակ: Հարկ է փաստել, որ «հեղգացեալ ես» տարբերակով միայն Հ. վրդ. Տաշյանի ցուցակում առկա տաղն է, մինչդեռ «ընդէ՛ր ես ծուլացել» սկսվածքով

կազմ.՝ Ա. վրդ. Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, տպ. կաթ. հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1984, ձեռ. 171, ժողովածու, էջ 480-481:

⁵ Գ. Յ. Սիմոնեան, Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1966, էջ 487-488:

⁶ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Բ. Բ., կազմ.՝ հ. Հ. Ոսկեան, ձեռ. 1259, Հաւաքածոյ (Տաղարան), ԺԷ.-ԺԸ., էջ 898/բ, Հմր 64, ձեռ. րղ. 142ա:

շատ և տարբեր ձեռագրերում⁷ հանդիպող օրինակներ կան, որոնցից և ոչ մեկում հեղինակի անուն չկա, և տաղը Հակոբ քահանա Ամասիացուն վերագրված չէ՝ բացառությամբ, իհարկե, հ. Հ. Ոսկյանի ցուցակի: «Ծուլացել ես» տարբերակով գործի ամենավաղ թվակիր ընդօրինակություն, որ մեզ հաջողվեց գտնել, առայժմ ՄՄ Հ^մ 2672 ձեռագիրն է, որ գրվել է 1607 թ., բոլորովին տարբեր է Հ. վրդ. Տաշյանի ցուցակում հիշատակված և «Յուշամատեան...»-ում սպագրված գործից: Պետք է հավելել նաև, որ «ծուլանալ» կամ «հեղգանալու» մեջ ինքնամեղադրանքի թեման ուշ միջնադարի ընդունված մոտիվներից էր, «բանաստեղծական անհատականություններն ու ներաշխարհի հուզական խորքն առավել ուժգնությամբ դրսևորվել են մանավանդ ապաշխարության տաղերում և առհասարակ մարդու մեղավորության, հոգու և մարմնի հակամարտության հարցին նվիրված ստեղծագործություններում»⁸: Սակայն «ծուլացել ես» տարբերակը

⁷ ա. Վիեն. 1042, Տաղարան, 1910², Թատրիգ, Երևան, գրիչ՝ Հր. Անատեան, էջ 671/բ, ձեռ. թղ. 25ա, «Ողբ ապաշխարութեան – Անձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր ես ի մահուանէ անհոգացեր» (անհեղինակ է դրված. Հր. Անադյանն այս ձեռագիրը նվիրել է հ. Ն. Ակիմյանին Վիեննայի Մխիթարյան մատենադարանի համար, տաղերը ժողովել է տարբեր ձեռագրերից): բ. Վնտկ 805 (Տաղարան Ի., ձեռ. թիւ 1339 (հին թիվ), Ժէ. դար., էջ 820, Հմր 38, ձեռ. թղ. 85ա, «Տաղ խառնական – Անձն իմ, ընդէր ես ծուլացել, / ՚ի մահուանէ անհոգացել (43 տուն): // Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. ե., կազմ.՝ հ. Ս. վրդ. Ճեմենեան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1995):

գ. Զմմառ 85 (հին թիւ 172, Տաղարան եւ Հաւաքածոյ, Ժէ.-ԺԲ. դդ., էջ 171/ա, Հմր 61, ձեռ. թղ. 112բ, «Ողբ ապաշխարութեան - Անձն իմ, ընդ<յ>եր ես ծուլացեր, ՚ի մահուանէ անհոգացեր, / մարմին, ընդեր ես հեղգացեր, / զան դժոխսոցն ես մոռացեր»: // Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմ.՝ Ս. վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1964):

դ. Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Բ. աթոռակից Կիւլեսերեան կաթ., Անթիլիաս-Լիբանան, տպ. կաթ. հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1957, ձեռ. 137, Տաղարան, անթվակիր, էջ 670, Հմր ԺԹ., «Այլ ողբ ապաշխարութեան – Անձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր»:

ե. ՄՄ 2127, ժողովածոյ, Ձեռ. Բ., Ժե. դ., «Ողբ ապաշխարութեան – Անձն իմ, ընտէ՛ր ես ծուլացեր, / ՚ի մահուանէ անհոգացեր...»;

ՄՄ 2236, ժողովածոյ, Ժէ. դ., «Ողբ ապաշխարութեան գեղեցիկ ոտանաւոր – Անձն իմ ընդէ՛ր ես ծուլացեր / ՚ի մահուանէ անգիտացեր...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. է., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 132, Հմր Ժէ., ձեռ. 121աբ: Նոյնի՛ էջ 581, Հմր 26, ձեռ. 443բ-4ա); ՄՄ 2672, Գանձարան, Կաֆա, 1607 թ., «Տաղ ապաշխարութեան եւ հոգոյ – Անձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. է., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2013, էջ 1088, Հմր 151/ա, ձեռ. 402բ); ՄՄ 2709, Գանձարան, 1645 թ., «Ողբ ապաշխարութեան ասա՛յ – Անձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր / ՚ի մահուանէ անհոգացեր...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2017, էջ 90, Հմր 24, ձեռ. 393աբ):

⁸ Հ. Սահակյան, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, (16-17-րդ դդ.)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 21:

նախ կրկնակ տողերով չի հորինվել, ապա այս երկում հեղինակն ինքնորոշման հարցերը արտահայտում է Աստծուն ուղղված խնդիրքի, աղոթքի միջոցով, այս տաղասացը Աստծու դեմ բողոք չունի, նա հաշտ է մահվան գաղափարին, անհաշտ է իր մեղքին, նրա հոգսը այն աշխարհն է: Իսկ «հեղգացել ես» սկսվածքով երգի հեղինակինը այս աշխարհի մարդն է, իր ես-ը, քանի որ կա անխուսափելի մահը. «մեռանելոց ես դու յանկարծ, / տանին, չը թողուն քո կամաց...», նրա հոգսը մնում է ունայն աշխարհում մարդու անցնելիք ճանապարհի որոնումը, ինչը հեղինակի գլխավոր խնդիրն է. «Մարմին իմ, գործեա՜ր զբարիս»: Այդ պատճառով էլ նա երգը գրել է կրկնակներով: Ուստի այս երկու գործերի հեղինակներին նույնացնելու որևէ տրամաբանություն և փաստարկ չկա:

Հ. վրդ. Տաշյանը ևս, շատ փաստեր չունենալով, արդեն «Յուցակ....»-ի առարկայական ցանկի «Տաղաչափութիւնք» բաժնում այս Հակոբ քահանա Ամասիացուն է վերագրում ևս մեկ տաղ՝ «Գովեստ Երուսաղէմի» խորագրով⁹: Սա, ինչպես պարզվեց, այլ երկ է: Կազմողն այսպիսի վերագրման հիմք համարել է Վիեննայի Հ^մր 514 ձեռագրում Հակոբ քահանայի անունով առկա տաղը¹⁰, որի վերաբերյալ առավել ամբողջական տվյալներ քաղում ենք Վիեննայի ցուցակի երկրորդ՝ հ. Հ. Ոսկյանի կազմած հատորից. «ՅԱստուծոյ շինեալ քաղաք պատուական, / ցանկալի զուարթնոց եւ որդւոց մարդկան»: Սկզբնատառք տներով՝ «Յակոբայ քահանայի ասացեալ»: Վերջերը՝ «Լցեալ տումարիս մեր արեթական / հազար եւ ութսուն, չորս թիւ ի լրման, (1635) / Յակոբէս առ քեզ երգ ընծայեցան» են¹¹: Ապա՝ այս գործը «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» ժողովածուի Ա. հատորում տպագրված է Հակոբ քահանա Բաթովկենց Թոխատցու անունով¹²: Երկի հեղինակի մասին առավել ծանոթություն է տալիս Ն. Ակինյանը իր «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքում¹³: Բնականորեն, «Անձն իմ, ընդէ՛ր ես հեղգացեալ» տաղի հեղինակ Հակոբ քահանային և այս Հակոբ քահանային նույնացնելու որևէ կռվան չկա: Սովորաբար տեղանվանական մականունները կապված են տվյալ գործչի կա՛մ ծննդավայրի, կա՛մ գործունեության վայրի հետ: Լինում է նաև, որ ծննդավայրի անունով կոչվող հեղինակի մականունը փոխվում է այն վայրի անունով, որտեղ տեղափոխվում և գործում է: Սակայն Հակոբ Թոխատեցին կամ Եվդոկիացին տեղային նշանակությամբ միշտ այս անունն է կրել, նույնիսկ Լեհաստանում գործունեություն ծավալելու ընթացքում: Բացի սրանից՝ նույնիսկ թռուցիկ մի հայացքը այս և Հակոբ Ամասիացու

⁹ Վիեննայի ցուցակ, հ. 1, էջ Կ/ա, «Յակոբ Ամասիացի»:

¹⁰ Տե՛ս Վիեննայի ցուցակ, հ. 1, էջ 987/ա, ձեռ. թղ. 112բ:

¹¹ Վիեն. 973, Տաղարան և Աղոթագիրք, 1692՝ ք., էջ 559-560, ձեռ. թղ. 84բ:

¹² Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16-17-րդ դդ.) 2 հատորով, հ. Ա., աշխ.՝ Հ. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 568-573:

¹³ Հինգ պանդուխտ տաղասացներ, գրեց հ. Ն. վրդ. Ակինյան, Վիեննա, 1921, էջ 141-202:

գործերին՝ բավական է հասկանալու համար, որ գործ ունենք բանաստեղծական և հատկապես լեզվական երկու տարբեր աշխարհների հետ:

Այնուհանդերձ, Հակոբ քահանա Ամասիացի հեղինակի անվան հիշատակման հանդիպում ենք այլ սկզբնաղբյուրի առնչությամբ: Նրա մասին հիշատակումները կապված են «Պատմութիւն Երուսաղէմայ» անվանված երկի հետ, որի ձեռագիրն այժմ կորած է: Այս Հակոբ Ամասիացին եղել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններից¹⁴, իր երկը, սակայն, շարադրել է 1635 թ. Ամասիայում¹⁵, բացի այս երկի հեղինակությունից՝ նրա մասին այլ բան մեզ հայտնի չէ¹⁶: Եթե իրավամբ այս Հակոբ Ամասիացին իր երկը գրել է 1635 թ., այսինքն՝ գործունեության ժամանակը ժե. դարասկիզբն է, բացառում է այն հանգամանքը, որ նա կարող է լինել ՄՄ Հ^տ 3751 ձեռագրում հիշատակված նույնանուն հեղինակը: Իսկ թե ի՞նչ կապ ունի Վիեննայի ցուցակում հիշատակված նույնանուն հեղինակի հետ, պիտի պարզվի նոր փաստեր ի հայտ գալու դեպքում:

Բացառման սկզբունքով այս մանրամասնումները և ներկայումս մեր ունեցած փաստերը մեզ օգնում են հասկանալու, որ Հ. վրդ. Տաշյանի ցուցակի «Անձն իմ, ընդէ՛ր հեղգացեալ ես» սկսվածքով տաղի հեղինակ Հակոբ քահանա Ամասիացին կապ չունի այս անվանը զուգորդված և համեմատության դրված մյուս հեղինակների հետ, նա առանձին ստեղծագործող է:

Մինչդեռ այս Հակոբ Ամասիացին և՛ իր ժամանակով, և՛ ստեղծագործական մտածողությամբ անմիջական կապ ունի ՄՄ Հ^տ 3751 ձեռագրում վկայակոչված Հակոբ Ամասիացու հետ:

Վերջինիս մասին մի քանի տեղեկություն կարող ենք ստանալ իր տաղերից: Այսպես:

«Հմասիացի Յակոբ էրէց» անունը հեղինակը հիշատակում է Զ. տաղում՝ դիմելով ինքն իրեն, ապա՝ «Երթայ քահանայն Յակոբ էրէցն այն», ինչպես նաև՝ «Յակոբ երէց» կամ «Յակոբ իրից» անունները կարդում ենք ծայրակապերով: Հմասիացի ձևը Ամասիացիի փոխարեն կարող էր առաջանալ թուրքերեն-օսմաներենի ազդեցությամբ առաջին՝ Ա տառը էլիֆ հնչողության փոխելով: Ապա՝

¹⁴ Գ. Յ. Սիմոնեան, Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, էջ 517: Միաբանք եւ այցելութ հայ երուսաղէմի, աշխատ.՝ Մ. Եպս. Աղանունի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 332: Իսկ, առնասառակ, այս հեղինակի և նրա գործի ժամանակի մասին առաջին վկայությունները տալիս է Թ. Աստվածատրյան Միեղդատյանցը (տե՛ս Նկարագիր աղետից Երուսաղէմի, Կ. Պոլիս, տպ. Յ. Միմենտիսեան, 1860, էջ 70, ծանոթ.):

¹⁵ Գ. Յ. Սիմոնեան, Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, էջ 400:

¹⁶ Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ երկրին մէջ, աշխատ. Մ. Եպս. Աղանունի, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1931, էջ 261-262: Դատաքննութիւն դատաքննութեանց, աշխատ. Թ. Մ. Տէր-Աստուածատուրեան Միեղդատեանց, Կ. Պոլիս, տպ. Բ. Յ. Քիւրճեան, 1864, էջ 48-51:

նույն Զ. տաղում հավանաբար այդպես է գրել՝ ծայրակապը քերականորեն ճիշտ ստանալու համար՝ «Յակոբ իրիցէ»:

Այս տաղասաց Հակոբ Երեց Ամասիացին ծնվել է Ժէ. դարակեսին, ինչպես այդ մասին վկայում է ինքը հեղինակը: Դ. տաղում Եղիսաբեթի մահվան ողբի առթիվ գրում է. «Ի թվին հազար հարիւր ամին, վաթսուներեք թիւ աւելին, հոկտեմբերի տասներեքին, փոխեցար յօր կիւրակէյին»: Հայոց 1166 թ. համապատասխանում է 1717 թվականին: Այս երկերը հեղինակը, ըստ արծարծված տրամադրությունների, գրել է նույն շրջանում, քանի որ ընդհանուր մահվան, հեռացումի տրամադրություններին ավելացել է նաև խոր ծերության հասած մարդու հոգեվիճակը, ինչը երկու անգամ հիշատակում է Հակոբ Երեց տաղասացը: Գ. տաղում գրում է. «Յոլեալ անցուցի կեանս վաթսուն ամի, / թէ աշխարհէս փոխի, դուք բարո՛վ կացէք»: Ապա Ա. տաղում. «Ալիք ծերութեան հասեալ եմ, / մարմնովս ցաւօք լցեալ եմ»: Ըստ միջնադարյան ընկալման՝ ծերության տարիքը մարդու կյանքի հինգ տասնամյակն է¹⁷: Ա. տաղում ուշագրավ է «Ալիք ծերութեան» արտահայտությունը, որը ըստ իմաստի համապատասխանում է վաթսուն տարեկանի շեմին հասած լինելուն: «Ալիք» բառը Հայկազյան բառարանը մեկնում է այսպես. «Նմանութեամբ՝ ծերութիւն, ալեորութիւն... և որպէս թանձրացեալ՝ Ծերք, ալեորք»¹⁸ (ընդգծումը մերն է – Ա. Ա.), վերջինս էլ նշանակում է. «հասեալ ի խոր ծերութիւն»¹⁹: Այս անցումային շեմն է մարդը ընկալում որպես խոր ծերության սկիզբ, ինչից էլ առաջացել է կյանքը, աշխարհը բանաստեղծորեն իմաստավորելու պահանջը: Այսինքն՝ 1717 թվականին վաթսունամյա Հակոբ Երեց Ամասիացին ծնվել է 1657 թ.: «Ալիք ծերութեան», այն է՝ խոր ծերություն, արտահայտությունը նշանակում է ծերությունից՝ հինգ տասնամյակից խոր ծերություն՝ վեցերորդ տասնամյակ անցնելը, քանի որ տարիքային այդ անցումները, շեմերը ընկալվել են տասնամյա բաժանումով: Ուրեմն՝ տաղասացի ծննդյան թվականը իսկապես 1657-ն է: Հավանաբար ապրել է մինչև 1730-ական թթ.:

Հակոբ Երեցի տաղերը զգայական, մորմոքուն արտահայտություններ են առհասարակ կյանքի ու աշխարհի մասին: Սակայն մահվան կսկիծ ապրող հեղինակի տողերում տեղ-տեղ վեր է բարձրանում նաև կոնկրետ մարդը՝ իր ապրած միջավայրի հետ ունեցած բախումով: Հակոբ Երեցի բանաստեղծության

¹⁷ ՄՄ Հ^մ 8249 (1839 թ., Ղարաու, գրիչ՝ Մուրատչիկ Մուրատեան), 5բ. «Բնագննութիւն կամ բնութեական հանգամանք մարդկային, Պրակ Գ., Յաղագս յղեաց եւ յղացելոց» գլխում մարդու բնական ընթացքի և բնութեական բաժանումների մասին առկա է հետևյալ սահմանումը. «Առդ, մարդն զանազանի հասակաւ ամաց, որոյ նկատելով յամս նորա կոչի այլ եւ այլ անուամբ, զի ի ծննդէն մինչեւ ցեօքն ամս է տղայ, մինչեւ ցշորեմասան՝ մանուկ, մինչեւ ցխան եւ մի՛ պատանեակ, մինչեւ ցերեսուն՝ երիտասարդ, մինչեւ ցյիսուն՝ ծեր, մինչեւ ցեօքանասունեմինգ՝ զառամ եւ աւելին՝ հաւ»: «Հաւ» նշանակում է նախաճայր, պապ:

¹⁸ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա., Վենետիկ, 1836, էջ 14:

¹⁹ Նույն տեղում, էջ 13:

հիմքում նաև այս անհատի ապրած օրերի արտահայտությունն է, ինչի վկայությունը նրա Ա. տաղն է: Ուշագրավ է նախ կրկնակը. «շրջիմ աքսորեա՛լ, աքսորեա՛լ»: Ընդհանուր բանաստեղծական մթնոլորտից պարզ է դառնում, որ աքսորը առաջին հերթին ոչ թե ֆիզիկական հեռացումն է, հայրենի կամ բնակության երկրից գնալը, այլ հոգեբանական վիճակը, մարդուց և միջավայրից տարանջատվելը, ինչի համար հիմք է դարձել Հակոբ երեցի դեմ իր ընկերների (իմա՛ միջավայրի) վարմունքը. «Բաբունդ երկնից, ի վա՛յր հայեաց, / տե՛ս նեղութիւնս յիմ ընկերաց, / հալածեն զիս վասն բարեաց....»: Ի տարբերություն բանաստեղծորեն արտահայտված մյուս հոգեվիճակների՝ այս տողերում շատ ավելի առարկայական է տաղասացի կենսագրական դրվագի արտացոլումը, որ առավել մասնավորեցվում է հաջորդ տողերում. «Իժի, քարբի նման հային, / ինձ նախանձին որպէս Կային, / վասն իմ յաւէտ սուտ վկային» (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.): Ինչպես երևում է, ինքնօտարման այս զգացումն առաջացել է հոգևոր ծառայության ընթացքում առաջացած խնդիրներից. «Յաւի սիրտ իմ յամենայն ժամ, / խրատ ասել ժողովրդեան, / չեն թողուր, որ բանամ բերան....» (տաղ Ա.): Գուցե այս ծառայողական պարտքը կատարելու խոչընդոտներն են նրա մեջ առաջացրել օտարումի, մահվան զգացողությունները: Թեև մյուս տաղերում ևս մասնավորեցված անուններ և դրվագներ կան՝ Ներսես, Նղիսաբեթ դստրիկ, ծառայակիցների նախանձի մասին հիշատակում կա նաև Զ. տաղում, սակայն բանաստեղծական մթնոլորտի և կսկծալի տողերի արանքում դժվարանում ենք կոնկրետ կենսագրական դրվագ տեսնել, սակայն դրանք անպայմանորեն կապված են իր ապրած օրերին և իր ապրումների կենսափաստերն են:

Փաստորեն, այս Հակոբ քահանա Ամասիացին ծնվել է 1657 թ. և ապրել մոտավորապես մինչև 1730-ական թթ., ստեղծագործել է ԺԸ. դարասկզբին, քահանա է եղել, ապա ծառայողական խնդիրներ է ունեցել, ինչպես ինքն է ականարկում՝ կապված հավատի և խրատի հետ. «Ինձ օգնութիւն ի քէն լիցին, / ամենասո՛ւրբ Աստուածածին, / վասն Որդույ քոյ Միածնին, / շրջիմ աքսորեա՛լ, աքսորեա՛լ» (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.): Ոչ պատահականորեն այս համատեքստում հիշատակում է Կյուրեղ Երուսաղեմացուն և Հովհան Ոսկեբերանին, որոնց աքսորել էին. առաջինի դեպքում պատճառը հերետիկոսներն էին, երկրորդի դեպքում՝ կայսրուհին և իր հավատակիցները: Ամասիայի միջավայրին դավանական տարբերությունները խիստ բնորոշ էին, և ենթադրաբար հենց դավանանքով էլ պայմանավորված չարախոսել են Հակոբ երեցին: Եվ ինչպես երևում է այս տաղի կրկնակների վերջին տողի փոփոխությունից, նա չի վերադարձել ծառայության և խրատ չի կարդացել: Առաջին ինը տան մեջ ասում է. «շրջիմ աքսորեալ», վերջին տան մեջ. «շրջեա՛լ աքսորեալ», որը թեև իր ճակատագրի հանգուցալուծումն է տալիս, բայց միևնույն ժամանակ՝ այդ կսկիծին համակերպվելն ու զգայապես չպարպվելը:

Արդ, որտեղի՞ց է Գ. Ախվերդյանը վերցրել կամ ստացել այս տաղասացի

գործերը: Նախ՝ սրանցից երկուսը՝ Բ. և Զ. տաղերը, ժամանակին հրատարակվել են «Մեղու Հայաստանի» հանդեսում²⁰, որի խմբագրությունը սրանք փոխանցել է Ղզլարաբնակ Հովհաննես Քուչուբեկյանը²¹, ինչպես ծանուցված է. «Մեծարգի թղթակիցն մեր Ղզլարցի պարոն Յովհան Թէոդորոսեան Քուչուբեկեանց ղրկելով մեզ Էմիասիացի Յակոբ քահանայի յօրինած մի քանի զանազան ոտանաւոր բանաստեղծութիւնքն, (որ ծաղկել է 1130 (1681) թուին Հայոց)....»²²: Ինչպես երևում է «մի մի կը տեղաւորենք լրագրիս թերթերումն, որով յայտնի կը լինին մինչև ցայսօր անծանօթ մնացած արժանաւոր անձանց անուանքն և իւրեանց գրաւոր աշխատանքն»²³ մտքից, խմբագրին և Հ. Քուչուբեկյանին ևս անծանոթ է եղել հեղինակը: Սակայն մյուս ուշագրաւ հանգամանքը, իհարկե, հայոց 1130 թ. հիշատակումն է, որը հուշում է նաև, որ այս տաղերը ձեռագրական ակունք ունեն: Հավանաբար «(որ ծաղկել է 1130 (1681) թուին հայոց)» միտքը վերաբերում է Հակոբ Ամասիացուն: 1681 թվականը լիովին համընկնում է տաղասացի գործունեության շրջանին, սակայն կարծում ենք՝ սա տաղերը գրելու թվականը չէ, հավանաբար այդ տաղերը ձեռագրին ավելի ուշ են միացվել, քանի որ որևէ կերպ չենք կարող անտեսել տաղում հիշատակված հայոց 1166 (1717) թվականը: Տաղերի՝ ձեռագրական ակունք ունենալու մասին է վկայում նաև Դավթարում դրանց ընդօրինակման ձևը: Նախ՝ դրանք ՄՄ ԶՊ 3751 ձեռագրում գրված են այլ ոչ Գ. Ախվերդյանի ձեռքով, հիմնական թերթերից ավելի փոքր են (533ա-536բ տետրն է), գրված են կանոնավոր գրով, գլխագրերով ծայրակայները ընդգծելու նպատակով, տեղ-տեղ նաև թավ գրերով: Իհարկե պարզ չէ՝ ով է ուղարկել այս տետրը Գ. Ախվերդյանին: Հովհ. Քուչուբեկյանը թեև ապրում էր Ղզլարում, սակայն լայն շփումներ ունեւ թիֆլիսի և Մոսկվայի գրական շրջանակների հետ, ինչը չի բացառում այն հանգամանքը, որ վերջինս կարող էր իմանալ Գ. Ախվերդյանի ծրագրերի մասին և ինքն էլ երգեր ուղարկել: «Մեղու Հայաստանի» հանդեսում հրատարակված և Դավթարում առկա տաղերի միջև կան որոշ ուղղագրական և ընթերցումից առաջացած տառային տարբերություններ, մեկական բառային տարբերություն, ինչպես նաև Բ. տաղը ունի խորագիր, որից

²⁰ «Աշխարհ», «Ի Յակոբայ երիցուէ Էմիասիացոյ ի ման դստեր իւրոյ», Մեղու Հայաստանի, 1858, ՀՊ 14, էջ 112; «Ի Յակոբայ երիցուէ Էմիասիացոյ ի ման դստեր իւրոյ», նույնի՝ ՀՊ 17, էջ 136:

²¹ Հ. Քուչուբեկյան (1836-1890) – ծնվել և գործել է Ղզլարում, եղել է գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ, լրագրող, թղթակցել է «Հյուսիսափայլ», «Մեղու Հայաստանի», ապա «Հայկական աշխարհ» հանդեսներին, Ղզլարում, ի թիվս զանազան գործերի, զբաղվել է ուսուցչությամբ (մամուրամասն տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1890, ՀՊ 16, էջ 4-5: Ս. Շախկյան, Հայ նոր գրականության ժամանակագրություն. 1801-1850, Երևան, 1973, էջ 208: «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 412-413):

²² Մեղու Հայաստանի, 1858, ՀՊ 14, էջ 112:

²³ Նույն տեղում:

պարզ է դառնում, որ այն գրվել է տաղասացի դասեր մահվան կապակցությամբ, տպագրված է երկխոսական ձևը պահելով և ամեն տան վերևում դնելով «Մայրն» կամ «Դուստրն»: Այս երգերը Հ. Քուլուբեկյանը «Մեղու Հայաստանի»-ի խմբագրությանն է ուղարկել 1858 թ., այսինքն՝ Գ. Ախվերդյանի գործունեության շրջանում: Թեև տաղերում նկատված որոշ տարբերություններ մեզ հիմք չեն տալիս պնդելու, որ տարբեր աղբյուրներից են, սակայն այս թվականը որոշակի տարակարծություն առաջացնում է այն առնչությամբ, որ Գ. Ախվերդյանը և Հ. Քուլուբեկյանը կարող էին տարբեր աղբյուրներ ունենալ կամ, որ ավելի հավանական է, նրանք նույն աղբյուրի երկու տարբեր ընդօրինակողներ են ունեցել: Այնուհանդերձ, սա մեզ հուշում է, որ այս հեղինակի գործերի ձեռագրական ակունքը պետք է փնտրել Թիֆլիս-Մոսկվա գրական շրջանակներում: Ինչպես երևում է, մեր տաղասացը ոչ միայն հետագա ուսումնասիրողներին, այլև ձեռագրական ավանդույթում ևս սակավածանոթ հեղինակ է եղել, որ այսպես, կարելի է ասել, անհայտ է մնացել, և նրա տաղերի՝ գոնե մի քանի օրինակով ընդօրինակություն չի պահպանվել:

Այս իրավիճակը վերագրելի է նաև Վիեննայի ցուցակում հիշատակված Հակոբ քահանա Ամասիացուն²⁴: Վիեննայի երկու՝ Հ^{մրբ} 160 և 514 ձեռագրերը գրվել

²⁴ Սույն իրադրությունը մեզ համար բացատրելի է այն հանգամանքով, որ գրեթե ամբողջ ԺԸ. դարակեսը ձգվեց թուրք-պարսկական նոր լարվածության շրջանը, ինչը խաթարում էր նաև ներքին մշակութային բնականոն կյանքի ընթացքը, ձեռագրեր չէին ընդօրինակվում, դժվար էր լինում տեղափոխությունը, այդ պատճառով էլ մեծ թվով ընդօրինակություններ չեն արվել: Իսկ առհասարակ, Ամասիան, ինչպես մյուս ծայրագավառներն ու հաղափները, ԺԸ.-ԺԸ. դդ. Օսմանյան կայսրության թուլացմանը զուգահեռ աստիճանաբար գրկվում էր բանուկ գավառի կարգավիճակից և մշակութային կյանք վարելու իր նախկին կերպից: Իսկ տեղի հայ ազգային կյանքի վրա իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև ԺԸ. դարակեսի թուրք-պարսկական բախումները: «1672 թուականին յետոյ եւս Ամասիոյ հաղափային եւ ընկերային շփոթ կեանքն եւ անբաղձալի կացութիւնը շարունակուած է մինչեւ ԺԹ. դարու կեսերու շրջանը...» (Գ. Յ. Սիմոնեան, *Յուշամատեան Պոնտական Ամասիոյ*, էջ 193): Մայրաքաղաքից հեռացվածությունը իր ազդեցությունն ունենում էր այս առումով, ինչի մասին 19-րդ դարասկզբին արդեն բողոքում էր Հակոբ դպիր Ամասիացին՝ մասնավորեցնելով. «Բայց չկարացեալ ի ձեռս բերել յայսմ անձուկ գաւառիս զըմտիւր անսխալ եւ անբերի Կանոնագիրս...» (եղմ Հ^{մր} 2056, էջ 102. ընդգծումը մերն է՝ Ա. Ա.): Ապա նույն հեղինակը արդեն վերը մեջբերված իր հիշատակարանում արձանագրում է. «Որ եմ ամենապատրաստ ընկալույ եպերանաց գիտնոց եւ առաքինեաց, / բայց խթան աբացից խորդացելոց ի խորշս խցից եւ եկեղեցեաց / Յակոբ դպիր Ամասիացի մահուեսի Գեորգեան», ինչը բառացիորեն նշանակում է՝ Ամենապատրաստ ընկալողն եմ գիտունների և առաքինիների մեղադրանքների (հանդիմանությունների), բայց կրնիք հարված (ծակելու հատկանիշ ունեցող. խթան աբացից նաև արտահայտություն է, համեմատում է կենդանիների հետ) [կտա] նրանց, որոնք խցերի և եկեղեցիների անկյուններում բնով անցած ձայներ են հանում (խումփալ): Ինչը ցույց է տալիս, որ այդ մթնոլորտում աստիճանաբար անկում էր ապրում հայ կյանքը նախևառաջ գիտամշակութային, եկեղեցական հարաբերությունների տիրույթում: Ձմայած, որ դպիր կոչումը հուշում է, որ այս Հակոբ Ամասիացին ևս պետք էկեղեցական լինե՝ եկեղեցական կարգի փոքր աստիճա-

են համապատասխանաբար 1796-1827 և 1792 թթ.: Սրանք բավական հետաքրքիր ձեռագրեր են այն առումով, որ արդեն հայտնի տաղարանային շարքեր են ներմուծվել համեմատաբար նոր ժամանակների հեղինակների: Հ. վրդ. Տաշյանը համարում է, որ Հ^մ 160-ը, որոշակի փոփոխություններով հանդերձ, ընդօրինակված է Հ^մ 514-ից²⁵: Վերջինս կանոնավոր տաղարան է, միավորներն ավարտվում են շարականներով²⁶: Առավել ուշ շրջանի հեղինակներից, որոնք, այսպես ասած, ներմուծվել են այս Տաղարան ժողովածու, են՝ Գալուստ Կայծակ Ամասիացի (Ժէ.-ԺԲ. դդ.), Մխիթար Սեբաստացի (1676-1749 թթ.), հայր Մատթեոս Եվդոկացի (1689-1772 թթ.), Մովսես դպիր Կարնեցի (Ժէ.-ԺԲ. դդ.), Ժէ.-ԺԲ. դդ. ակնառու տաղասացների շարքը լրացնում և ամփոփում է Նաղաշ Հովնաթանը (1661-1722 թթ.) և այլք: Ինչպես տեսնում ենք, տաղարանային հավելումները կատարվել են Ժէ.-ԺԲ. դդ. հեղինակների գործերով, որոնց կողքին դրվել է նաև Հակոբ Ամասիացու գործը: Հ^մ 514 ձեռագիրն ընդօրինակվել է 1792 թ. Տրիեստում (Իտալիա), ինչը ևս մեկ անգամ մեզ եզրակացնելու հնարավորություն է տալիս, որ ձեռագիրը և վերջին շրջանի գործերը ավելի վաղ պետք է գրված լինեին և այլ ընդօրինակություններ ունենային, որ դրանք այդ թվականին և այդ վայրում հնարավոր լինեին ընդօրինակել: Ժամանակով մեզ հայտնի՝ Մխիթար աբբայի, Մաթեոս Եվդոկացու, Գալուստ Կայծակի և մյուսների տաղերի կողքին զգուշորեն թեմայով ընդօրինակվել է նաև Հակոբ Ամասիացու տաղը, որը եղել է այդ շրջանի, այն է՝ Ժէ.-ԺԲ. դդ. տաղասացներից, որի գործը թեև ոչ շատ տարածված, ընդօրինակվել է այս ձեռագրում, սրանից էլ անցել է Հ^մ 160 ձեռագրին: Մի ուշագրավ հանգամանք էլ է կապում այս հեղինակներին՝ ծննդյան և գործունեության աշխարհագրական տարածքը՝ Սեբաստիա-Ամասիա-Եվդոկիա-Կարին և ընդ (սրանք բոլորը նույն աշխարհագրական խաչմերուկում միմյանց հարակից բնակավայրեր են, ինչը չի բացառում նրանց միջև մշակութային փոխառնությունները), ինչը առավել ակնառու է դարձնում իրողությունը, որ Տաղարան «մուտք գործած» համեմատաբար նոր հեղինակներին կապում են իրենց գործունեության և ստեղծագործական ժամանակն ու տեղը:

Այս երկու Հակոբ Ամասիացիներին կապում է ոչ միայն մեր եզրակացրած

նավոր: Ամեն դեպքում, նշյալ բնորոշումը ցույց է տալիս բուն եկեղեցու ներսում գաղափարական և այլ հակասությունների մասին: Նշեցինք, որ այս ամենը կապված էր նաև Օսմանյան կայսրության վայրիվերումների հետ և ամբողջովին բնորոշում է նաև Հակոբ Երեց Ամասիացու ապրած ժամանակը, իր ունեցած բախումը եկեղեցու մյուս սպասավորների հետ:

²⁵ Վիեննայի ցուցակ, հ. 1, էջ 985/ա:

²⁶ Տաղարաններն անկանոն կառուցվածք չունեն, սրանք լոկ պատահական հերթականությամբ տաղերի ժողովածուներ չեն, այլ տոնական օրվան համապատասխան երգեր, որոնք ժամանակ առ ժամանակ լրացվել են կամ փոխարինվել նոր երգերով: Ի տարբերություն ծիսական ժողովածուների՝ Տաղարան ժողովածուներում, իհարկե, այսպես կոչված, տեղաշարժերը ավելի շատ են լինում:

ստեղծագործական ժամանակը, այլ նաև բանաստեղծական-լեզվական մտածողության ընդհանրությունը: Մենք չենք ծանրանա զուտ լեզվաքերական հարցերի վրա: Խնդիրն այս դեպքում ժէ.-ժԸ. դդ. գրականության, բանաստեղծության փոփոխություններին և դրանց լեզվամտածողական դրսևորմանն է առնչվում: ժէ.-ժԸ. դդ. գրականությունը, հայ կյանքի փոփոխություններին, քաղաքական առումով անբարենպաստ օրերին զուգահեռ, դառնում էր այդ փոփոխությունների որոշակի առումով զգայնաչափը: ԺԶ.-ժԷ. դդ. ինչ-որ առումով ընդհատված բանաստեղծական, մշակութային վիճակին նոր թափ էր հաղորդվում ժէ. դարակեսից, որին այսպիսի պատկերավոր ձևակերպում է տալիս Մ. Աբեղյանը. «Եվ հնի հենց այս մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հնի վերածնությանը»²⁷: Բանաստեղծական, տաղասացական ավանդույթները ընդհատվել էին, հայ բանաստեղծությունը զարգանում էր առավել ժողովրդական, աշխարհաբարյան մթնոլորտում: 1639 թ. թուրք-պարսկական հաշտության պայմանագրից հետո հայ կյանքի որոշակի հանդարտումը ստեղծագործական որոնումների համար հնարավորություն էր ստեղծել: Ժէ. դարն այդ առումով դառնում էր հին ու նոր մտայնությունների խաչասերման ժամանակը: Եվ սա անպայմանորեն կապվում էր նաև գրականության լեզվի որոնումների, ապա արտահայտման ձևերի հետ: Դարձյալ Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ «առաջ է գալիս մի նոր գրաբար գրականություն»²⁸ (ընդգծումն հեղինակինն է – Ա. Ա.): Ժէ. դ. այս հատկանիշները խոշոր առումով ժառանգեցին, ապա լիակատար դրսևորման հասցրին ժէ.-ժԸ. դդ. հեղինակները: Մ. Աբեղյանի զուգորդումները պարսկական տիրապետության ներքո գտնվող հայկական իրականության համար էին, մինչդեռ գրական խնդիրները նույն ծավալով և բովանդակությամբ զարգանում էին նաև Օսմանյան կայսրության հայկական գրական օջախներում: Նոր գրականության և նոր լեզվի կրողներից էր առաջին հերթին Պաղտասար Դպիրը, որ ստեղծագործել է Կ. Պոլսում: Պաղտասար Դպիր լեզուն որքան էլ դասական՝ գրաբար էր, բայց սա, Մ. Աբեղյանի բնորոշմամբ, նոր գրաբարն էր, որն արտացոլում էր ժամանակի գրական լեզվի փոփոխությունները: Սակայն դարաշրջանի, ապա դարավերջի և դրա հիմքի վրա շարունակված ժԸ. դարասկզբի գրականության լեզուն բացառապես այս նոր գրաբարի մշակման հիմքի վրա չզարգացավ: Այն որ աշխարհիկ մտածողությունը, հայ քաղաքական-հայրենական հարցերը ներխուժել էին գրականության տարածք, արդեն անկասելի էին դարձնում նաև աշխարհիկ, բարբառային ձևերի ներթափանցման ընթացքը դասական լեզու: Եվ հենց այս լեզվամտածողական համադրությամբ են գրվել Հակոբ Ամասիացու/Ամասիացի-

²⁷ Մ. Աբեղյան, Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից (Առաջին երեսնամյակ): // Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 545:

²⁸ Նույն տեղում, էջ 547:

ների տաղերը՝ ներառելով ինչպես միջին հայերենյան, այնպես էլ արդեն իրենց բարբառին ներհյուսված թուրքերեն բառեր, արտահայտություններ: Երկլեզվյան համագրություն մի այլ պատկեր են ներկայացնում Գալուստ Կայծակ Ամասիացու տաղերը²⁹, որոնք նոր գրաբար և զուգադիր հայատառ թուրքերեն են³⁰: Սակայն կարևոր է նաև այն հանգամանքը, թե լեզուն և գրականությունը ո՞ր շրջաններում ի՞նչ դրսևորումներ ունենին: Այսպես կոչված, նոր գրաբար լեզվի կրողներ դառնում էին Ժ. Գ. սկսված գրականության վերածնունդյան շարժման կենտրոնների՝ էջմիածնի, նոր Զուղայի, ապա Կ. Պոլսի ներկայացուցիչները: Իսկ փոքր-ինչ ավելի ծայրագավառների, կենտրոնների մտավոր շարժումներից ավելի հեռու գտնվողները կրում էին իրենց միջավայրի ազդեցությունը՝ իրենց ստացած գրավոր մշակույթին ավելացնելով արդեն իրենց միջավայրի լեզվական ազդեցությունը³¹: Ամենևին չի նշանակում, որ սա համատարած իրողություն էր, և նրանք անհաղորդ էին եղած փոփոխություններին: Սա առավել բնորոշում է տվյալ միջավայրին ներհաղորդ գործիչների լեզվական ընտրությունը, որով էլ միավորվում են Հակոբ Ամասիացիները:

Մարդու և հասարակության, անհատի և միջավայրի բախումից առաջ եկող հոգեբանական միջնորդող ամենից ավելի է կապում այս հեղինակներին՝ ընդհանրություն ստեղծելով նրանց և հասարակության, միջավայրի, իրենց սոցիումի, ապա դրանով պայմանավորված՝ իրենց անձի հանդեպ ունեցած հոգեվիճակով: Աշխարհից հեռու, միայնակ, միջավայրից հեռացած մարդու հոգեվիճակը առանձնակի բնորոշում են իրենց անձին տրված բնութագրումները, խրատները: Որպես աշխարհայինից և մարդուց հեռացած անհատի կյանքի հանգուցալուծում՝ ՄՄ Հ^{մր} 3751 ձեռագրի տաղասացն իրեն դիմում է այսպես. «Է՛յ խիղճ Յակոբ երէց, / դու լա՛ց անկար ի մէջ ուշկապարկաց, / արթո՛ւն կացիր, աչե՛րդ բաց, շրջեա՛ աքսորեալ, աքսորեալ, աքսորեալ»: Ուշագրավ է երկրորդ տողը: Ըստ Ալիշանի՝ հուշկապարիկները «ի Ս. Գիրս Համբարուաց և ամայի վայրուց Հրէշից հետ յիշուին»³²: Ապա մեջբերում է Եզնիկ Կողբացու միտքը. «Ս. Գրոց՝ ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելոյ զսաստկութիւն աւերածին

²⁹ Մեր նպատակը, իհարկե, Ժ. Գ. դդ. գրականության լեզվական համընդհանուր պատկերի մանրամասն դիտարկումը չէ, այլ նկատելը, որ այն տարակերպ է զարգացել, ապա ցույց տալը, որ լեզվական ընտրությունը պայմանավորում է ստեղծագործողների միջև եղած ընդհանրությունը կամ զանազանությունը:

³⁰ Գալուստ Կայծակ Ամասիացի, *Կուսաշաւիղ*, Կ. Պոլիս, 1704, էջ 158-160: Իսկ երգիծական գործեր՝ Ամասիայի բարբառին բնորոշ լեզվական միավորներով տե՛ս Գ. Յ. Սիմոնեան, *Յուշամատեան Պոնտական Ամասիոյ*, էջ 478-480:

³¹ Ամասիայի բարբառի մասին մանրամասն տե՛ս Գ. Յ. Սիմոնեան, *Յուշամատեան Պոնտական Ամասիոյ*, էջ 935-940:

³² Հ. Ղ. վրդ. Ալիշան, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, 1910, էջ 202:

աշխարհին, Յուշկապարկաց ասեն բնակել յաւերական...»³³: Այսինքն՝ հուշկապարիկների մեջ ապրել, լացել, որ այս դեպքում նշանակում է ողբալ կյանքը, ապաշխարել, նշանակում է՝ գնալ դեպի ավերակները (անբնակ, անապատ վայրերը), հեռանալ աշխարհից, մարդուց: Բանաստեղծական ընկալման և զգացումների տիրույթում սա առաջին հերթին մարդու հոգեբանական հեռացումն է, իր միջավայրի հետ կապի խզումն է, ոչ թե ֆիզիկական:

Վիեննայի ցուցակում հիշատակված Հակոբ Ամասիացին իր տաղի վերջին՝ հայատառ թուրքերեն մասում իրեն այսպես է դիմում. «Րախրբբ Յակոբ», որ նշանակում է՝ քահանա Հակոբ: Սակայն այս բառը թուրքերենում ունի նաև լրացուցիչ, հավելական իմաստ, որ նշանակում է քրիստոնյա մարդ, որ հեռանալով աշխարհայինից, ապրում է վանքում, ապա՝ կրոնի համար մարդկանցից, հասարակութունից հեռացած և միայնակ ապրող մարդ, այսինքն՝ կրոնավորի դեպքում ճգնավորի, միայնակյացի³⁴ կենցաղ վարող մարդ: Գուցե և հեղինակը սա նկատի չի առել, այնուհանդերձ, բանաստեղծական տրամադրությունները հուշում են, որ այս Հակոբ Ամասիացին ի սկզբանե հաշտ չի եղել կյանքի ու մահվան ընթացքին, և նրա մտածողությունը ձևավորվել է այդ ենթահոգի վրա: Բացի այս հոգեբանական վիճակից՝ ևս մեկ անգամ ընդգծելի է, որ Ժէ. կամ Ժէ.-Ժէ. դդ. այս Հակոբ Ամասիացին, ապա 1717 թ. ստեղծագործած Հակոբ Ամասիացին քահանա են կոչում իրենց: Երկուսն էլ հիշատակում են երեսաներ ունենալու հանգամանքը:

Տողերից մեկում այս Հակոբ քահանան հորդորում է իրեն կոչել խրատատուր. «Ռամիտս կոչեա՛ խըրատատուր», ապա ՄՄ Հ^{մբ} 3751 ձեռագրում հիշատակված Հակոբ Ամասիացին իր դրամատիկ կացությունը արտահայտում է նրանով, որ իրեն թույլ չեն տալիս խրատ ասել: Տողերից ենթադրելի է, որ այս հոգևոր սպասավորների համար ամենից առաջնայինը եղել է խրատ ասելը, խոսելը մարդկանց հետ: Եթե առաջինի դեպքում կարող էր իրեն այդպես կոչել, քանի որ եկեղեցու սպասավոր էր, երկրորդի դեպքում պարզ է, որ արդեն տեղի էր ունեցել իր անձի դեմ բանսարկությունը: Ի սկզբանե մարմնի և հոգու դրամա ապրող անհատի մեջ կյանքի որոշ հանգամանքներ ծնել են մերժվածություն և միայնակության տրամադրությունները, որոնք արդեն 1717 թ. տաղերում դրսևորվել են մահվան զգացումի արտահայտմամբ:

Եվ հենց այս ապրած, կրած զգացումից էլ ծնվել է բանաստեղծական թեման՝ մեղքի, աշխարհի և մահվան մասին: Նշեցինք, որ ՄՄ 3751 ձեռագրում հիշատակված Հակոբ Ամասիացին իր երգերը գրել է խոր ծերության՝ վաթսուհամ-

³³ Նույն տեղում, էջ 202-203: Տե՛ս նաև՝ **Եզնիկ Կողբացի**, *Եղծ Աղանդոց*: // «Մատենագիրք հայոց», Բ. Ա., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 458: Տե՛ս նալի ԺԳ. 21-22:

³⁴ Rahip բառն է:

յա հասակում: Տարիքի և դրան ուղեկցող զգացողությունների մասին Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ եզր է ծերութեան հասակն, վասն այն կոչի ծեր, որ է ծայր կենցաղոյս եւ նաւահանգիստն ի գերեզման»³⁵: Եթե տողերի արանքում տաղասացը չհուշեր իր կյանքի ճակատագրական դրվագի մասին, կարելի էր կարծել, որ աշխարհի և մահվան բանաստեղծական որոնումները ծնունդ են կյանքի որոշակի շեմն անցած մարդուն ուղեկցող զգացումների: Մինչդեռ այս ամենը խորապես ապրված և տեսնված զգացողությունների արգասիք է, ինչը Հակոբ Ամասիացի տաղասաց/ները արտահայտել է/են բանաստեղծական հարուստ զգացումներով և կառուցվածք-պատկերներով: Բնականորեն, և՛ առհասարակ միջնադարյան, և՛ դրանց միախառնված նոր ժամանակների տաղերի ազդեցությունը, ինչպես նաև դրանց հետևելը հուշում են տաղասաց/ների՝ իսկապես բանաստեղծական ավանդույթների կրող լինելը: Առանձնակի ուշագրավ է երկու դեպքում էլ կրկնակ տողերի, նաև, այսպես կոչված, եղանակավոր երգերի առկայությունը: Հ. Բախչինյանը Պաղտասար Դպրի տաղերի մասին խոսելիս նոր շրջանի բանաստեղծական ձևերի մասին գրում է. «Պաղտասար Դպրի տաղերն ունեն նոր շրջանի բանաստեղծությանն առավել մերձ ամփոփ ու կառուցիկ կոմպոզիցիա», որի արտահայտումներից է այն, որ տաղերը «հարուստ են կրկնակ-կրկներգերով...»³⁶: Վերջիններիս ազդեցությունը տաղաչափության մեջ նաև զգայնության աստիճանը բարձրացնելն է: Իսկ Հակոբ Ամասիացու կսկծալի, զգայական տողերը բանաստեղծական ներշնչանքով իսկապես մերձենում են Պաղտասար Դպրի տրամադրություններին՝ դրանով միևնույն ժամանակ արտացոլելով ուշ միջնադարի վերջին շրջանում տեղի ունեցող դրական առումով բանաստեղծական խմորումները: Ժամանակին տարածված, ապա Պաղտասար Դպրի գործածած թերևս ամենահայտնի «Զարթի՛ր, նազելի՛ իմ, զարթի՛ր» եղանակի տաղաչափական այլ տարբերակ է Հակոբ քահանայի Բ.՝ «Զարթի՛ր ի ննջմանէդ, որդեա՛կ իմ, զարթի՛ր» չափը:

Կրկնակ երգերի դեպքում նաև ուշագրավ են բանաստեղծությունների հանգավորման առանձնահատկությունները, քանի որ կրկնակները պահում են իրենց հանգը՝ նման չլինելով տվյալ տան հանգավորմանը: Հակոբ Ամասիացի/ների տաղերի դեպքում ամեն տան մեկ, երկու կամ երեք նույնահանգ տողերին հաջորդում-լրացնում է բոլոր տների համար միահանգ կրկնակը:

Բնականորեն, ազդեցությունների մասին չենք կարող խոսել, բայց սրանք հուշում են բանաստեղծական ավանդույթներին, փոփոխություններին հետևելու՝ նույն ժամանակ ստեղծագործող երկու տարբեր տաղասացների սկզբունքների մասին:

³⁵ Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացու, 1740, էջ 207:

³⁶ Պաղտասար Դպիր, Տաղեր (Լիակատար ժողովածու), աշխատ. Հ. Բախչինյանի, Երևան, 2007, էջ 65:

Երկու Հակոբ Ամասիացիներին սերտորեն աղերսում է նաև քնարական հերոսի խնդիրը: Նրանց տաղերում ինքնագրույց է, հայացք անձին, էությունը, որը թեև չի հաղթահարում մահվան և կյանքի ի վերուստ բաժանումը. «Ի յընտանեացդ եւ զաւակաց / մեռանելոց ես դու յանկարծ, / տանին, չը թողուն քո կամաց, մարմին իմ, գործեա՛ զբարիս, գործեա՛ զբարիս», այնուհանդերձ, միտքը, հոգին անհատի այդ զգացումների մեջ անցնում է զուլալման, մաքրագործման ճանապարհով, որի, թերևս, ամենից զգայական արտահայտությունը Գ. տաղն է.

Յանիւս ընկղմի գուր գերեզմանի,

եթէ պատահի, դուք բարո՛վ կացէք:

Տառապանքի կրողը անհատն է, քնարական հերոսը, որ չարացած չէ աշխարհի հանդեպ.

Կարօտով գնամ, սիրով ձեր մնամ,

յորժամ ես լամ, դուք բարո՛վ կացէք.....:

Ի սէր ձեր հարայ, սրտիւս դառնացայ,

ի ձէնջ հեռացայ, դուք բարո՛վ կացէք:

ԺԷ.-ԺԸ. դդ. բանաստեղծների շարքին, այսպիսով, ավելանում է ևս մեկ անուն՝ Հակոբ քահանա Ամասիացի, քանի որ մեր դիտարկած ընդհանրությունները երկու տաղասացների միջև ոչ այնքան առնչակցություններ են հուշում, որքան օրինաչափություններ, քանի որ այդ հատկանիշներն առավել մոտեցնում են այս հեղինակներին և նրանց տարանջատելու կամ հակադրելու կռվան չեն տալիս: Ուստի, մեր ընկալմամբ, ՄՄ 3751 ձեռագրում և Վիեննայի ցուցակում հիշատակված երկու Հակոբ Ամասիացիները կարող են լինել միևնույն անձը և նույն տաղասացը:

Նույնիսկ եթե ապագայում հայտնվելիք փաստերի շնորհիվ այս հեղինակներին տարանջատելու հնարավորություն ունենանք, ապա լեզվամտածողական և բանաստեղծական այս ընդհանրությունները մեզ օգնելու են համակարգային պատկերացում ունենալ Փոքր Հայքի Ամասիա երկրամասի հայ ուշմիջնադարյան բանաստեղծական ինքնուրույնության և դրսևորման յուրահատկությունների մասին, քանի որ նրանց բանաստեղծությունը սերտորեն առնչվում է իրենց երկրամասի կենսամշակութային-բանաստեղծական միջավայրին:

* * *

Այստեղ տպագրում ենք՝

ա. ՄՄ Հ^{մբ} 3751 ձեռագրի թվով 6 տաղերը (որոնցից երկուսը նաև տպագրվել են «Մեղու Հայաստանի» հանդեսում),

բ. Հակոբ երեց Ամասիացու՝ ըստ Վիեննայի մատենադարանի ձեռագրի՝ «Յուշամատեան.....»-ում տպագրված տաղը,

գ. երկու տաղերը և դրանց հեղինակներին նույնացնելու շփոթը վերացնե-

լու և մեր խոսքն առավել համոզիչ դարձնելու նպատակով նաև «Ա՛նձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր» տաղը՝ ըստ ՄՄ ձեռ. 2672, 393աբ:

Բոլոր տաղերը դնում ենք բնագրական հիմք-աղբյուրների պատկերով (չփոխելով նույնիսկ ուղղագրական սխալները)՝ ներկայիս կանոններին համապատասխանեցնելով միայն մեծատառ-փոքրատառ (հատուկ և հասարակ անունների) գրությունը և կետադրությունը:

Ա.-Ձ. տաղերի տնաբաժանումը ձեռագրիցն է, իսկ վերջին երկուսինը՝ մերը: Վերջում դրված են նաև օտար և բարբառային բառերի բացատրություններ:

ԱՄԱՍԻԱՅԻ (ԷՄԱՍԻԱՅԻ) ՀԱԿՈԲ ԵՐԵՅ

Ա.

1. Յո՛յ իմ մեծի թշուառութեանս,
միայն յԱստուած մնաց իմ բանս,
միշտ կարօտիմ ասպնջականս,
շրջիմ ւափորեա՛լ, ւափորեա՛լ, ւափորեա՛լ:

2. Ալիք ծերութեան հասեալ եմ,
մարմնովս ցաւօք լցեալ եմ,
աչեւս արտասւօք թացեալ եմ,
շրջիմ ւափորեա՛լ, ւափորեա՛լ, ւափորեա՛լ:

3. Կիւրեղ Երուսաղէմացիմ
երեսուն ամ ւափորեցիմ,
գնալ հայցեմ հետոց նոցիմ,
շրջիմ ւափորեա՛լ, ւափորեա՛լ, ւափորեա՛լ:

4. ՅՈՒՆԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ մեծին
երեք անգամ ւափորեցիմ,
հող եւ մոխիրս նոցա ոտին,
շրջիմ ւափորեա՛լ, ւափորեա՛լ, ւափորեա՛լ:

5. Բագում նեղութիւնք երեւին
միշտ հանապազ բոլօր տարին,
որպէս զմոլորեալ ոչխարին,
շրջիմ ւափորեա՛լ, ւափորեա՛լ:

6. Ինձ օգնութիւն ի քէն լիցին,

ամենասո՛ւրբ Աստուածածին,
վասն Որդւոյ Բոյ Միածնին,
շրջիմ ւսփորեա՛լ, ւսփորեա՛լ:

7. Բաբունդ երկնից, ի վա՛յր հայեաց,
տե՛ս նեղութիւնս յիմ ընկերաց,
հալածեն զիս վասն բարեաց,
շրջիմ ւսփորեա՛լ, ւսփորեա՛լ:

8. Իժի, Բարբի նման հային,
ինձ նախանձին որպէս Կային³⁷,
վասն իմ յաւէտ սուտ վկային,
շրջիմ ւսփորեա՛լ, ւսփորեա՛լ:

9. Յաւի սիրտ իմ յամենայն ժամ
խրատ ասել ժողովրդեան,
չեն թողուր, որ բանամ բերան,
շրջիմ ւսփորեա՛լ, ւսփորեա՛լ:

10. Է՛յ խիղն Յակոբ երէց,
դու լա՛ց անկար ի մէջ ուշկապարկաց,
արթո՛ւն կացիր, աշե՛րդ բաց,
շրջեա՛ ւսփորեալ, ւսփորեալ, ւսփորեալ:

ՄՄ ձեռ. 3751, 533բ-4ա, «ՅԱԿՈԲ ԻՐԻՑԷ»

Բ.

1. Տէր իմ Յիսուս Քրիստոս առ ինձ բարկացաւ,
վասն մեղաց իմոց այլում դառնացաւ,
իմ նազելի որդեակս ի հող ննջեցաւ,
զարթի՛ր ի ննջմանէդ, որդեա՛կ իմ, զարթի՛ր:

2. Եղեալ եմ տասն ամաց լցեալ զիմ տարին,
ոչ կամեցայ լինիլ այս մարմնոյ գերին,

³⁷ Ակնարկում է Սուրբ Գրքի պատումը՝ Կայենի նախանձը Աբելի հանդեպ, քանի որ Աստված ընդունեց Աբելի ընծաները, Կայենինը՝ ոչ: Հմմտ. Ծննդ. Դ. 3-5:

ահա ես կու գնամ ի ֆաղաֆն վերին³⁸,
մի՛ լայր, ֆաղցրի՛կ մայր իմ, ոչ կարեմ զարթիլ:

3. Բամից ամենեցուն ֆաղցր ես սիրական,
երանելեաց դասուն եղեր բարեկամ,
ֆու հոգուն փոխարեն զիմ հոգիս կու տամ,
զարթի՛ր, իսպառ ննջող որդեա՛կ իմ, զարթի՛ր:

4. Յանիս կենաց իմոց գուր ընկղմեցաւ³⁹,
լար արծաթոյս իմոյ, վա՛հ, որ ֆակեցաւ,
մանեակ ոսկոյս իմոյ փշրիլ կամեցաւ,
մի՛ լայր, ֆաղցրիկ մայր իմ, ոչ կարեմ զարթել:

5. Ա՛յ նազելի որդեակ, յինէն հեռացար,
զաղէտ ես զարտաստո՛ւս զիա՛րդ մոռացար,
վասն մեղաց իմոց ինձ օտարացար,
զարթի՛ր, իսպառ ննջող որդեա՛կ իմ, զարթի՛ր:

6. Կարապետ որդին ֆո տանէդ են հանած,
ժառանգ մարմնոյս իմոյ անտիրունջ մնաց,
ա՛յ վախ, որ ես էյի սիրով նշանած,
մի՛ լայր, ֆաղցրի՛կ մայր իմ, ոչ [կարեմ զարթել]:

7. Ո՛վ իմ սիրուն որդեակ, զմեղս իմ գիտեմ,
հանապազ արտասուօ՛ք զմիտս իմ դատիմ,
ա՛յ իմ անուշ գառնուկ, զֆեզ ո՛ւր գտնիմ,
զարթի՛ր ի ննջմանէդ, որդեա՛կ իմ, զարթի՛ր:

8. Բաժանել կամեցայ իմ հօրէս, մօրէս,
բարեաւ մնայ արի սիրուն եղբօրս,
այլ ոչ կարե՛ք տեսնել, վերջացաւ օրս,
մի՛ լայր, ֆաղցրի՛կ մայր իմ, ոչ կարեմ զարթել:

³⁸ Խոսքը վերին Երուսաղեմի՝ փխբ. երկնային արքայության մասին է, գնալ վերին Երուսաղեմ, նշանակում է մահանալ, գնալ հրեշտակների բնակարան:

³⁹ Այս և հաջորդ երկու տողը համառ. «Մինչեւ կործանեալ իցէ լար արծաթոյն, եւ խորտակեալ մանեակ ոսկոյն. եւ մանրեալ սափորն յաղբերն, եւ ընկրկեալ անիւն ի գութն» (Բանձ Ժող. ԺԲ. 6):

9. Է՛յ նագելի որդեակ, ելար բանակեղ
 է՛ր այրըլմիշ եղար փոյ սիրականեղ,
 հինգ օրիկ ապրեցար յետ նշանածիդ,
 զարթի՛ր, իսպառ ննջող որդեա՛կ իմ, զարթի՛ր:

10. Սիրամարգ ոսկեթել⁴⁰ նշանածս առի,
 անդառնալի համփայ ելեալ գնացի,
 աղաչեցէ՛ք լինիմ հարսն Քրիստոսի,
 մի՛ լայր, փաղցրի՛կ մայր իմ, ոչ կարեմ զարթիլ:

11. Էրանելի մայր իմ սուրբ կոյս Մարիա՛մ,
 այս անցաւոր աշխարհս ինձ եղեւ հարամ,
 ահա երես անկեալ դիմօք առ քեզ գամ,
 բարեխօսեա՛ Յիսուս Որդւոյդ սիրական:

ՄՄ ձեռ. 3751, 534աբ, «ՏԵՐ ՅԱԿՈԲԷՍ Է»,
 հրատ. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1858, Հմր 17, էջ 136:

Գ.

1. Յանիս ընկղմի գուր գերեզմանի,
 եթէ պատահի, դո՛ւք բարո՛ւկ կացե՛ք:

2. Այս բանս խղճալի, ողորմ ու լալի
 պիտի պատահի, դո՛ւք բարո՛ւկ կացե՛ք:

3. Կարօտով գնամ, սիրով ձեր մնամ,
 յորժամ ես լամ, դո՛ւք բարո՛ւկ կացե՛ք:

4. Ողջոյն յիսուսեան դրօքն փակելեան⁴¹
 աւանդեմ ձեզ զայն, դո՛ւք բարո՛ւկ կացե՛ք:

5. Բաղբառս նուագի եւ լար արծաթի
 թէ խորտակեցի, դո՛ւք բարո՛ւկ կացե՛ք:

⁴⁰ Այս արտահայտությունը հմմտ. «Սիրասնունդ սիրամարգ սըխրալի, / Նըրբափայլ ոսկեթել տարփալի....» տողերի հետ (ՆԵՐՍԵԱ ՇՆՈՐՀԱԼԻ, *Տաղեր և գանձեր*, Երևան, 1987, էջ 363):

⁴¹ Հմմտ. «Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն. եւ դրամ փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն անին հրէից, եկն Յիսուս եւ եկաց ի միջի նոցա, եւ ասէ ցնոսա. Ողջոյն ընդ ձեզ», «Գալ Յիսուս դրամն փակելովք. եւ եկաց ի մէջ, եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ». Յովն. Ի. 19, 26:

6. Ի սէր ձեր հարայ, սրտիս դառնացայ,
ի ձէնջ հեռացայ, դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

7. Բամեալ խրախանայք, գինով զուարճանայք,
օրհնեա՛լ ֆահանայք, դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

8. Իմ հա՛րֆ եւ եղբա՛րֆ, ֆո՛ւրֆ իմ եւ մա՛րֆ,
ամենեհեանֆդ հաւասարֆ դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

9. Յոլեալ անցուցի կեանս վաթսուն ամի,
թէ աշխարհէս փոխի, դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

10. Վաղիւ աղաչեմ, սիրով պաղատիմ՝
աղօթե՛լ վասն իմ, դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

11. Եղո՛ւկ իմ անձին, է մանեակ՝ ոսկի,
երթ փշրեսցի, դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

12. Երթայ ֆահանայն Յակոբ Էրէցն այն
եւ ասէ զայս բան՝ դո՛ւմ բարո՛վ կացե՛մ:

ՄՄ ձեռ. 3751, 534բ-5ա, «ՅԱԿՈԲ ԻՐԻՅՎԵ Ե»

Դ.

1. Յանունդ անուշ, ա՛յ սիրական,
իմ նազելի՛ եւ բարեկա՛մ,
հանապազ վասն ֆոյ կու լամ,
Եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

2. Ակ փերուզով կ'երեխս,
ոսկերէլ վարդի տերեւ եւ,
ոչ գիտեմ՝ ուր գնացեր էս,
Եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

3. Կամար ունֆդ ֆոշէ պէնտերով,
ականջդ ոսկի գնտերով,
զարդարեալ անգին ակերով,
Եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

4. Ուրախադէմ ֆաղցրիկ պատկեր ես,
լալ ու գունար անգին ֆար ես,
որդեա՛կ իմ, ո՛ւր գնացեր էս,
եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

5. Բարետեսակ բոլոր լուսին,
նման Հոփփսիմէ կուսին,
արժան լիցիս նոցին դասին,
եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

6. Իմ սիրական՝ նման վարդի,
մեզ լալ էիր, ֆան զտասն որդի,
գեղեցիկ գէտ սիրամարգի,
եղիսապե՛տ անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

7. Բամեալ ամենայն բարեկա՛մ,
եկե՛ք լացե՛ք զիմ սիրականն,
հօր եւ մօրս մեկիկ միայն,
եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

8. Յօղի աչերնուս արտասուք,
հօր եւ մօր ֆոյ սրտիկն է սուգ,
Աստուած ողորմեսցի հոգուդ,
եղիսապե՛տ անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

9. Ի թվին հագար հարիւր ամին
վաթսունեվեց թիւ անլին,
հոկտեմբերի տասներեփին,
փոխեցար յօր կիրակեյին,
եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

10. Է՛յ լուսադէմ պատկեր հանած,
հետ առեալ տարեր նշանած,
Քրիստոսի լե՛ր հարսնացած,
եղիսապե՛տ, անուշ պատկեր, եաֆուդ պատկեր:

11. Սոսկալի տեսեալ հրեշտակին

Երեւեցաւ քեզ ահագին⁴²,
ծնողդ թողիր լալագին,
Եղիսապէտ, անուշ պատկեր, ետքոյ պատկեր:

12. Էրանեալ սուրբ կոյս Մարիամ,
բարեխօսեա՛ւ առ Տէր Արքայն,
Եղիսապետ կոյս աղջիկն այս
լինի բաժին արքայութեան:

ՄՄ ձեռ. 3751, 535աբ, «ՅԱԿՈԲ ԻՐՅԻԵՍ Է»

Ե.

1. Աշխարհիս խեղճ բաներն ո՛ւմ անեմ կանգաւ,
մանուկ, մատղաշ կտրին կ'լինի բէմուրաւ:
Ներսէսին կրակն խիստ շատ էր մետէթ,
անուր համար կու լայ մայրն Ներսէսին:

2. Խիստ անօրէն ցաւի նա հանդիպեցաւ,
ախր չազատէց, նարն կտրեցաւ,
սիրուն եւ գեղեցիկ անձն մաշեցաւ,
ո՛վ կարօղ է քաշել դարը Ներսէսին:

3. Երեք ամիս լման ցաւին դիմացաւ,
իւր մեռնելու օրն շուտով իմացաւ,
գիտես, թէ հոգին որ տուէց, քնեցաւ,
աջապ ո՛ր ջուրը ընկնի ետքը Ներսէսին:

4. Քնած է դէյին, երեսը բացին,
ոչ գտին Ներսէսը, խղներով լացին,
սուղ արեւն աժան առին, գնացին,
իմդատին չի հասաւ հայրը Ներսէսին:

5. Հարն ու մայրն կու լան՝ որդի՛ սիրելի,
մեր տանն արեգակ եւ մեր փարելի,
Ներսէսի սրտիկն է եղեր ետքալի,

⁴² Հմմտ. «Սոսկալի տեսիլ հրեշտակին / Ի փառաւոր քո գերեզմանին.....» շարականի հետ (Մատենագիրք հայոց, Ը. հտ., Շարական, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 198. «Հարցք Յարութեան....., Ա.Զ»):

երկինքն էլաւ ահուգարը ներսէսին:

6. Գեղեցիկ թռչուն էր, ելաւ ու թռաւ,
ծնօղաց ձեռիցն, միակ էր, առաւ,
եղո՛ւկ հագար վայ, որ կտրին մեռաւ,
թող սե՛ւ ու սո՛ւգ մտնու եարը ներսէսին:

ՄՄ ձեռ. 3751, 535բ-6ա

2. ԱՇԽԱՐՀ

1. Յանունդ աշխարհ կոչեցեալ է, եղեալ ես վայր արտասուաց,
ժամանակ մի ուրախ առնես, յետոյ բերես սուգ եւ լաց,
խաբես զմարդիկ, կորուսանես, քեզի սրտով սիրողին, վա՛խ:

2. Աստ մինն ծնանի, եղբա՛րք, անդ միսն մեռանի,
յայսմ տանս է ուրախութիւն, անդ է սուգ եւ տրտմութիւն,
այսպէս պատրես զամենեսեան, քեզի սրտով սիրողին վա՛խ:

3. Կամաց քոց հնազանդ առնես զաղամեանքն ամենայն,
զինչ որ կամիս, զայն կատարել տաս ամենից համայնգամայն,
վասն որոյ Տէրն պատուիրէ, քեզի սրտով սիրողին վա՛խ:

4. Որպէս պատմէ սաղմոսն Դաւթեան մեղաւորաց ամենուն՝
ահա կան եւ ունին քոյ աշողութեամբ մեծութիւն⁴³,
քե՛զ ասեմ, ո՛վ զալմ աշխարհ, քեզի սրտով սիրողիս վա՛խ:

5. Բարեկամ ես դու այնոցիկ, աշխա՛րհ, զքեզ ո՞վ սիրէ,
գորդի ի հօրէ, դուստր ի մօրէ եւ զսկեստուն ի հարսնէ,
զայր եւ զկին այլ բաժանես, քեզի սրտով սիրողիս վա՛խ:

6. Իւրաքանչիւր արուեստաւորք, կրօնաւորք եւ կարգաւորք,
եպիսկոպոսք, եւ մեծաւորք, եւ զնոցին սպասաւորք՝
զամենեսեան նախանձ շարժիս, քեզի սրտով սիրողիս վա՛խ:

7. Բամեալ պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խոռվէ,
գանձէ բազում աշխատութեամբ, ոչ գիտէ՝ ո՛ւմ ժողովէ,

⁴³ «Ահա մեղաւորք են եւ յաշողեալ է նոցա, կան եւ ունին զմեծութիւն աշխարհի»։ Սաղմ. ՀԲ. 12:

գրկէ զհոգին, փ[r^ճ]է զմարմինն, քեզի սրտով սիրողիս վա՛խ:

8. Ի նանիր տգնիմք հանապազ վասն կամայաշտութեան,
շինեմք տուն, այգի, բախշայ վասն մարմնոյ հեշտութեան,
թողումք օտարաց եւ գնամք, քեզի սրտով սիրողիս վա՛խ:

9. Յաւօք ծնցիս⁴⁴, - ասացաւ մեզ, որպէս եւ եմք իսկապէս,
գուր եւ անօգուտ վաստակօղ, միշտ դանդաղիմք մարմնապէ[ս],
աշխարհ զիւրն սիրէ՞ արդեօք, զինքն սրտով սիրողիս վա՛խ:

10. Էմասիացի՛ Յակոբ Երեց, զամենեսեան խրատես,
այլոց թէ զինչ որ պատուիրէս, բաւական է դու պահես,
չա՛նք արա միշտ սրտի մտօք, մի՞թէ զաշխարհս ժամանես,
ատեա՛ զաշխարհս եւ ասես զայս՝ քեզի սրտով սիրողիս վա՛խ:

ՄՄ ձեռ. 3751, 536բ, «ՅԱԿՈԲ ԻՐԻՑԷ»,
հրատ. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1858, Հմր 14, էջ 112:

ՏԱՂ ԶԸՂՋՄԱՆ՝ ՇԱՐԱԴՐԵԱԼ ՅԱՄԱՍԱՅԻ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱԷ

1. Ա՛նձն իմ, ընդէ՛ր հեղգացեալ ես,
ընդ աշխարհիս հեշտացեալ ես,
ի պատուիրանս ոչ կացեալ ես,
մարմի՛ն իմ, գործեա՛ զբարիս, գործեա՛ զբարիս:

2. Աւա՛ղ կեանք իմ, որ թերի ես,
ի մէջ մեղաց դու գերի ես,
յառաքինութեանց հեռի ես,
մարմի՛ն իմ, գործեա՛ զբարիս, գործեա՛ զբարիս:

3. Որ յԱդամայ ես դու զարմէն,
ազգաւդ կոչեալ ես դու արմէն,
մեռանեկոց ես, ո՛վ մարմին,
մարմի՛ն իմ, գործեա՛ զբարիս, գործեա՛ զբարիս:

4. Ի սոսկալի դատաստանի,
զի՞նչ տալոց ես պատասխանի

⁴⁴ «Եւ ցկինն ասէ. Բազմացուցանելով բազմացուցից գտրտմութիւնս քո եւ զհեծութիւնս քո.
տրտմութեամբ ծնցես որդիս». Ծննդ. Գ. 16 (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.):

հոգիդ մարմնոյդ կու բաժանի,
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

5. Բանիս, գործով եւ խորհրդով
միտք քո լիցի միշտ Աստուծով,
անցելոց եւ դու յանհուն ծով,
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

6. Ռամիսս⁴⁵ կոչեա՛ խրատատուր,
աշօք հայէ, մըտօք էդուր,
ճըշմարտապէս կայ անշէջ հուր,
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

7. Ի յընտանեացդ եւ գաւակաց
մեռանելոց եւ դու յանկարծ,
տանին, չը թողուն քո կամաց,
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

8. Պու տիմեայ պիր ուլու խանտըր
իքի գաբուլու պիր հանտըր,
պունուն սօնդու ուրիանտըր
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

9. Բախըբբ Յակոբ, չըղըր եաման,
իւրէնիսմ օլտու պիրեան,
պու թէնտէն, պու տիմեատան,
իլլէ շէյթան էլիմտէն:

(Այս աշխարհը մի մեծ հյուրատուն է,
երկու դռնանի մի տուն է,
սրա վերջը մերկություն է,
մարմին իմ, գործեա՛ղ զբարիս, գործեա՛ղ զբարիս:

Քահանա՛ Յակոբ, կանչի՛ր՝ վա՛յ (ո՛հ ասա),

⁴⁵ Այս բառը ենթադրաբար *ռամիկ*, *ռամկամիսս* բառերի հետ առնչություն ունի: Բացատրություն մեկ այլ տարբերակ էլ առաջին՝ Ռ. տառը թվային համարժեքով կարգալն է՝ *հազարամիսս*, որ կնշանակի՝ *բազմամիս, հոգնամիս*:

իմ սիրտը տառապեց (այրվեց)
այս մարմնից, այս աշխարհից,
հատկապես չարի (սատանայի) ձեռքից (հայատառ թուրքերեն
հատվածի բառացի թարգմանությունը մերն է՝ Ա. Ա.):
Սիմոնեան Գ., Յուշամատեան Պոնտական Ամասիոյ,
Վենետիկ, 1966, էջ 487-488:

ՏԱՂ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈԳՈՅ

1. Ա՛նձն իմ, ընդէ՛ր ես ծուլացեր
‘ւ ի մահուանէ անհոգացեր,
մարմին, ընդէ՛ր ես հեղգացեր,
զահ դըժոխոցն ես մոռացեր:
2. Գիտեմ՝ գեհեն կայ պատրաստեալ,
յէրես զանանց կեանսըն թողեալ,
յանցօռօփս ես շրարեալ
եւ տարտարոսն ըզֆեւ պատեալ:
3. Է՛ր չես իլար եւ արտասուեր,
զԱստուած դու ֆեզ յօգնել կոչեր,
մի՞թէ կարես զմեղքդ ծածկեր,
յանանց հըրոյն ըզֆեզ թափեր:
4. Խայտառակեալ անձն իմ չարով
ի մէջ մեղաց կամ զերթ ըզծով,
յալիս ծըփիմ յոյժգին հողմով,
մէզ եւ մորիկ պատեալ զինով:
5. Բարեաց զրկեալ եմ կարօտով,
ըստոյգ անկեալ անձն իմ ի սով,
եւ յԱստուծոյ եմ ամօթով,
ֆանգի յանցանք ունիմ յոլով:
6. Տէ՛ր իմ՝ գըթած եւ բարերար,
անդիսակալ ‘ւ անյիշաչար,
ի ֆէն հայցեմ սրտով յօժար,
թո՛ղ ինձ ըզմեղս իմ շատ եւ չար:

7. Ոչխարս ի քո հօտէս մօլար,
գին եմ արեանդ եւ չեմ աստար,
լե՛ր դու ինձ հար եւ մխիթար,
մերժեայ յինէն զմութն եւ զխօսար:

8. Աստուած հզօր, երկայնամիտ,
անոխակալ եւ ճշմարիտ,
ես քո անսուտ սուրբ հրամանիտ
հօտացի անեղ Բանիդ:

9. Տէ՛ր, առաքեա՛յ զքո Սուրբ Հոգիդ
եւ զմոլորեալ ծառայս քո գի՛տ,
զոր ըստեղծեալ ծածկագիտիդ,
’ւ ետուր ինձ գանձ եւ մարգարիտ:

10. Ա՛նձն իմ, դու լա՛ց, կա՛ց եւ տխուր,
գի քեզ վառած կայ հնոց եւ հուր,
այս անցօր կեանքս է փրփուր,
զոր ժողովես ունայն եւ գուր:

11. Է՛ր կաս անհոգ, դու մէկ ասա՛յ,
գէմ չես տըղայ դու անիմայ,
այծմիկ խնդաս գէտ նոր փեսայ,
յետոյ վայ տաս անձինդ վերայ:

12. Աղօթից ժի՛ր կաց եւ ջանա՛յ,
քան զըզնօն եւ աբեղայ,
ըզմեղս ատեա՛յ եւ անարգեա՛յ,
զբարին սիրեա՛յ եւ մեծարեա՛յ:

13. Յունան ի փոր կէտին գոչէր⁴⁶,
Պետրոս ըզքեզ յօգել կոչէր⁴⁷,
եւ մաքսօրն աղաղակէր.
Աստուած, քաւեա՛յ զմեղս իմ⁴⁸, - ասէր:

⁴⁶ Մարգ. Յովն. Բ. 1-3:

⁴⁷ Մատթ. ԺԳ. 30:

⁴⁸ Դուկ. ԺԸ. 13:

14. Յոյժ ողորմած ըզբեզ գիտէր,
վասն այն հայցել համարձակէր,
արդ, մի՛ անտես առնէր զիս, Տէ՛ր,
զի դու միայն ես մարդասէր:

ՄՄ ձեռ. 2672, 393բ

ՕՏԱՐ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աժան – 1. Էժան: 2. Դյուրությամբ, հեշտությամբ

Ախր (չ)ազատել – մահից (չ)ազատվել, (չ)փրկվել

Ահուզար – ահ ու դող, մեծ տագնապ, աղետ, տառապանք, վիշտ, տվայտանք, ողբ

Այրբլմիշ լինել – բաժանվել, թողնել-հեռանալ

Անխմայ - անմիտ, տխմար

Աջապ – արդյոք

Բախչայ – պարտեզ, այգի

Բէմուտատ – անհիղձ, անփափազ, բախտազուրկ, երազանքը անկատար մնացած

Գէմ – ընդհակառակը

Դար – 1. Տառապանք, տանջանք, ծանր վիճակ՝ դրուժյուն: 2. Աղետ, փորձանք, չարիք

Դէյին (դէյի) – իբրև, որպես

Եար – սիրելի, սիրած աղջիկը

Եարալի (եարալու) – 1. Վիրավոր: 2. փխբ. Վշտահար, սիրուց խոցոտված

Եաբուզ – հակինթ թանկարժեք քար, կարմրագույն, նռնագույն

Զալմ (զալմ, զալում) – անգուլթ, դաժան

Զէտ – նման, ինչպես, որպես

Է՛ր (ընդէ՛ր) – ինչո՞ւ

Իմդատին չհասնել – օգնության չհասնել

Լալ ու գումար – սուտակ և գոհար

Լման – ամբողջ, լրիվ, ամբողջական

Հարամ – 1. կրոն. Նզոված, արգելված: 2. Անսուրբ, խարդախ ճանապարհով ձեռք բերված, պիղծ

Հարը կարվել – ուժերը սպառվել

Մեռեք – ժամանակ, ժամանակահատված, տևողություն, ընթացք (ժամանակի), պահ

Պէնտ – ժապավեն, կապ

Սուլ – թանկ

Փերուզ – երկնագույն կամ բաց կանաչ թանկարժեք քար

Քօշէ – զույգ

ANI ARAKELYAN

**PRIEST YAKOB AMASIATS'I (EMASIATS'I): AN UNKNOWN
LATE MEDIEVAL ARMENIAN POET**

Keywords: Gevorg Akhverdyan, catalogue of the Armenian manuscripts of the Mekhitarists of Vienna, “Song (*tagh*) of Repentance”, “exile”, the revival movement of the 17th century, “new Grabar”, the individual and the environment, death and life, newly discovered poems (*taghs*).

The songbook (“Davtar,” Ms M3751) of Gevorg Akhverdyan who collected samples of folklore, has preserved six *taghs* (poems) written by a late medieval Armenian poet, priest Yakob Amasiats'i. There is almost no information about this poet in the Armenian manuscript catalogues and other printed sources, and his poems have survived only in this single manuscript.

A study of the Manuscripts W160 and W514 allows to conclude that priest Yakob Amasiats'i (Emasiats'i) mentioned in them is the same person as the author of the poems in Ms M3751, since they display a number of common features: the specific language which took shape in the 17th century (classical Grabar with elements of the spoken language) and some lyrical motives – conversation with oneself, reflection of one's state of mind, examination of his own self and the world, personal experience and feelings.

If, nonetheless, new facts emerge in the future, witnessing that these Yakobs are two different authors, one may assess the mentioned commonalities as an evidence of a specific late medieval poetic thinking characteristic of the poets of the province Amasia of Lesser Armenia.

АНИ АРАКЕЛЯН

**ИЕРЕЙ АКОБ АМАСИЙСКИЙ (ЭМАСИЙСКИЙ), НЕИЗВЕСТНЫЙ
АРМЯНСКИЙ ПОЭТ ПОЗДНЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ**

Ключевые слова: Геворг Ахвердян, каталог рукописей Венских Мхитарийских, “покаяльный стих”, “ссылка”, возрождение семнадцатого века, “новый грабар”, личность и окружающая среда, смерть и жизнь, вновь открытые стихи.

В *Песеннике* («Давтар», рук. М 3751) Геворга Ахвердяна, собиравшего образцы устного творчества, сохранилось шесть неизвестных стихотворений позднесредневекового армянского поэта Акоба иерея Амасийского (Емасийского). В каталогах рукописей и печатных источниках сведения о нем почти

отсутствуют, а стихи сохранились только в указанной рукописи. Однако изучение венских рукописей №160 и №514 позволяет предположить, что упомянутый в них Акоб Амасийский – это то же лицо, что и автор стихов в М 3751, поскольку между ними много общего: сформировавшийся в 17-ом веке литературный язык (классический грабар с элементами живого языка), лирические мотивы – беседа с самым собой, отражение душевного состояния человека, вглядывающегося в собственное “Я” и мир жизненных обстоятельств и личных переживаний.

Если, тем не менее, обнаружится, что Акобов следует считать двумя разными авторами, упомянутые общие черты можно будет расценивать как свидетельство об особом поэтическом мышлении позднего средневековья, свойственном стихотворцам области Амасия в Малой Армении.